

նական, իր բառերով՝ «սոցիալական» գիտութիւններէն, որոնք իր սերունդին նախասիրութիւնը կը կազմէին, գիտական ոգիին իրենց բերած նպաստովը, միւս կողմէ՝ փցուն, անբովանդակ հայրենասիրութեան իրենց անուղղակի հասցուցած հարուածովը: Այդ հայրենասիրութիւնը քնարական ու պատմական, զոր Ալիշանները Արեւմուտքէն ու Քամառ-Քաթիպաները Արեւելքէն դրած էին հրապարակ, Րաֆֆիով պսակաւոր, տեղի կու տար նորերու իրապաշտներ- գրոհին:

Մտաւ ճակատումի, խորունկ արհամարհանքով, աչազուրկ դաստիարակի մը հետ, որ իր ահաւոր յիշողութեան անդունդներուն մէջ ամբարած էր ինչ որ իբր սպառնալից հասեր էր Վասպուրական աշխարհը, Արեւելքէն ու Արեւմուտքէն: Կարդացած, անշուշտ ուրիշներու աչքովը, բայց նշանախեց մը անգամ չզոհած: Աչազուրկ ուսուցիչը Խրիմեանի եւ Սրուանձտեանցի գործը պաշտպանելու խանդին մէջ գրգռած էր ընկերաբանական նախանիւթերով ամրակուռ նորընծան, որ քիչիկ մը Շահազիզ թարմացուցած, նոր կարգերու, ընկերակարգերու ջատագովը կ'ըլլար ու կը յարձակէր մեր ամէնէն հաստատ կազմակերպութեան, եկեղեցիին վրայ: Ծովածաւալ իր հմտութեամբը աչազուրկ դաստիարակը ապացուցուց կենդանի դերը, զոր այդ մարմինը ունեցեր էր մեր պատմութեան հոլովոյթին վրայ, պատմութիւն՝ գերազանցապէս յորինուած ժողովուրդ տարրով, որ իշխողներուն, իշխաններուն յեղեղուկ բախտին իբր հակահարուած կը մնար անխախտ, մեր երկրի երեսին: Ի՛նչ տխուր, եղկելի արարածներ՝ մեր արքաները, պայծառ ու մեծ փառանգին դէմը մեր հայրապետներուն: Ո՞ր՝ նոյնիսկ փլատակ սիւները ապարանքներուն, որոնք այդ խամաճիկ թագաւորներուն փոքր քէները ու անձերը պատասպարեր էին: Դաստիարակը անշուշտ համարում մըն էր հրապարակի հասարակ տեղիքներուն ու դիւրաւ զգեստնեց Պալասանեան միայն վերծանած ուսանողը: Անիկա ահաւոր էր, երբ թեւածեց իր բուն կալուածին վերեւ, թիւերու եւ